Հովհաննես Ալեքսանյան

Հայերի տեղաբաշխումը Խորհրդային Ադրբեջանում[1]

Դեռևս ցարական Ռուսաստանի կազմում գտնված ժամանակ Անդրկովկասի տնտեսական և քաղաքական խոշոր կենտրոններում հայ ազգաբնակչությունը գերակշռում էր ոչ միայն իր թվաքանակով, այլև զբաղեցնում էր ամուր դիրքեր քաղաքական, տնտեսական, առևտրական, գիտական-կրթական և այլ ոլորտներում: Պատահական չէ, որ անգամ 1918 թ. Բաքվում իրականացրած հայոց ահավոր սպանդից հետո տեղի հայ բնակչությունը դեռևս 1920-ական թթ. իր թվաքանակով գերազանցում էր Երևանի հայությանը, իսկ Թիֆլիսն իր 100 հազարից ավելի հայությամբ ոչ միայն Անդրկովկասում, այլև ամբողջ ԽՍՀՄ-ում հայ ամենամեծաթիվ բնակչություն ունեցող քաղաքն էր: Ուստիև խիստ կարևոր և առանձնակի հետաքրքիր են Ադրբեջանի ՍԽՀ և Վրաստանի ՍԽՀ հայ ազգաբնակչության թվաքանակի, նրա աճի դինամիկայի, տեղաբաշխման, լեզվական պատկանելության, գրագիտության և այլ գործընթացների դիտարկումն ու ուսումնասիրությունը:

1920-ական թթ. Ադրբեջանի ՍԽՀ հայ ազգաբնակչության վերաբերյալ թվական և այլ տվյալներ արձանագրվել են նախ 1923թ. ԽՍՀՄ քաղաքային մարդահամարով (ի դեպ՝ Վրաստանի ՍԽՀ-ում այն չի անցկացվել): Այսպես՝ 1923 թ. քաղաքային մարդահամարով Ադրբեջանական ԽՍՀ քաղաքաբնակ հայության թվաքանակը կազմել է 77 002 մարդ (37 524-ը՝ իգական սեռի): Անշուշտ, Ադրբեջանի ՍԽՀ հայ քաղաքային բնակչության գերակշիռ մասը բնակվում էր Բաքվում: Մարդահամարով արձանագրված Ադրբեջանի ՍԽՀ հայ քաղաքային բնակչության 36,7 տոկոսը (28 265) մարդ ներկայացնում էր բնակչության ինքնագործ խումբը, այսինքն՝ նրանց, ովքեր ունեին գոյատևման միջոց (աշխատավարձ, եկամուտ):

Ավելի համընդհանուր վիճակագրական տվյալներ է արձանագրել 1926 թ. դեկտեմբերի 17-ի ԽՍՀՄ համամիութենական մարդահամարը, որով վերջնականապես ճշգրտվեցին 1920-ական թթ. Ադրբեջանի ՍԽՀ հայ ազգաբնակչության թվաքանակը, տեղաբաշխումն ու այլ տվյալներ թե՛ քաղաքային, թե՛ գյուղական բնակչության ընդգրկմամբ:

Խորհրդային Ադրբեջանի հայ ազգաբնակչությունը 1926 թ. մարդահամարով կազմում էր 282004 մարդ[2] կամ հանրապետության ամբողջ բնակչության 12,4 տոկոսը: Հայ քաղաքային բնակչությունը կազմում էր 103 280 մարդ կամ հանրապետությունում բնակվող հայության 36,6 տոկոսը: Բաքվում (Արդյունագործական-գործարանային շրջանի հետ միասին) կենտրոնացած էր ադրբեջանահայության 27,1 տոկոսը(76 656 մարդ), իսկ Գանձակում՝ 5,7 տոկոսը (16 148 մարդ): Բաքու քաղաքում բնակվող հայությունը տեղաբաշխված էր քաղաքի 10 շրջաններում, որոնցից առավել հոծ հայ

---

[1] Հայոց պատմություն, հատոր IV, գիրք I: Նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.), Երևան, 2010, «Զանգակ» հրատարակչություն, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, էջ 604-608:

[2] Տե՛ս Всесоюзная перепись населения 1926-го года, т. XIV, Закавказская Социалистическая Федеративная Советская Республика. Азербайджанская ССР, Москва, 1929, էջ 12:

բնակչություն ունեին ութերորդ (24 584), իններորդ (13 247 մարդ) և յոթերորդ (13 199 մարդ) շրջանները։ Ադրբեջանահայության մեջ բավականին բարձր էր հայերենին տիրապետողների թվաքանակը՝ 97,9 տոկոս, որոնք հայերենը համարում էին իրենց մայրենի լեզուն, 1,4 տոկոսի համար մայրենին ռուսերենն էր։ Գրագետ էր հանրապետությունում բնակվող հայության 33,2 տոկոսը, իսկ վերջիններիս 89,9 տոկոսը գրագետ էր նաև իր ազգային լեզվով։ Ի տարբերություն միութենական մյուս հանրապետություններում բնակվող հայության՝ Ադրբեջանի ՍԽՀ հայերի գերակշիռ մասը՝ 63,4 տոկոսը, գյուղաբնակ էր և ցրված հանրապետության բոլոր գավառներում։ Այսպես՝

1. **Գանձակի (առանց քաղաքի) գավառի հայ ազգաբնակչությունն իր թվաքանակով ամենամեծն էր Ադրբեջանի ՍԽՀ գավառների մեջ, որտեղ բնակվում էր 41 861 հայ (40 895-ը՝ գյուղաբնակ)։** Գավառի մյուս 2 քաղաքները՝ Ելենենդորֆն ու Շամխորը, նույնպես հայաբնակ էին, ընդ որում՝ դրանց հայ բնակչությունը մի քանի անգամ գերազանցում էր տեղի թուրք (ադրբեջանցի[3]) բնակչության թվաքանակը։ Գավառի գյուղական շրջաններից Աղջաքենդիում (8975 հայ կամ 91,8 տոկոս), Բանանցում (Բայանում՝ 12 409 հայ կամ 99,7 տոկոս), Սլավյանովկայում (8396 հայ կամ 75,5 տոկոս), Չայքենդում (6413 հայ կամ 76,5 տոկոս) հայ ազգաբնակչությունը գերակշռում էր թվաքանակով։ Ելենդորֆում բնակվում էր 3017 հայ կամ շրջանի բնակչության 43,4 տոկոսը։ Գանձակի գավառի գյուղական մյուս շրջաններում ևս բնակվում էին հայեր, որոնց թվաքանակը մի քանի տասնյակից հասնում էր մի քանի հարյուրի։

2. **Բաքվի գավառում (առանց Բաքու քաղաքի) մեծաքանակ հայ ազգաբնակչություն կար՝ 7541 մարդ, որոնցից գյուղական շրջաններում բնակվում էր 429 մարդ։** Գավառի հայ ազգաբնակչությունը կենտրոնացած էր գլխավորապես Արդյունագործական-գործարանային շրջանում (7112 մարդ)։ Այդտեղ հայությունը կենտրոնացած էր Լենին-Սուրխաթական շրջանում՝ 4792 մարդ, Բիբի Հեյբաթում՝ 1928 մարդ, Բինիգադում՝ 392 մարդ[4]։

3. **Շամախի գավառում հայության թվաքանակը կազմում էր 6485 մարդ** (6293-ը՝ գյուղաբնակ, մասնավորապես Բասխալում՝ 1789 մարդ, Մատրասայում՝ 4447 մարդ)։

4. **Նուխիի գավառի 4007 հայ բնակիչներից** Նուխի քաղաքում բնակվում էր 1565-ը, իսկ մյուս մասը ցրված էր գավառի գյուղական շրջաններում՝ Վարդաշենում՝ 1336 մարդ, Նիջում՝ 571 մարդ, Կուտկաշենում՝ 133 մարդ և այլն։

5. **Ղազախի գավառի հայ ազգաբնակչության թվաքանակը կազմում էր 3632 մարդ,** որից 2020-ը բնակվում էր Ձևգամի գյուղական շրջանում։ Հայաբնակ էին նաև գավառի քաղաքային բնակավայրերը՝ Ղազախում՝ 414 մարդ, Թովուզում՝ 404 մարդ և Աղստևում (Աղստաֆա)՝ 171 մարդ։

---

[3] ԽՍՀՄ-ում 1920-ական թթ. անցկացված մարդահամարներում Ադրբեջանի գերակշիռ, տիտղոսակիր ազգային խումբը չէր կոչվում ադրբեջանցի, այլ կրում էր թուրք-թաթար անունը։ Միայն 1930-ական թթ. նրանց սկսեցին նշել **ադրբեջանցիներ** անվանումով։

[4] Տե՛ս Итоги Всесоюзной переписи населения 1926-го года по г. Баку и Промыслово-заводскому району, т. 1, Баку, 1929, էջ 42։

6. **Գյոկչայի գավառում բնակվում էր 3154 հայ**, այդ թվում՝ 2907-ը գյուղական շրջաններում՝ Կարամարյանում՝ 1553 մարդ, Սուրախանում՝ 776 մարդ: Հայաբնակ էին նաև գավառի քաղաքներն ու մյուս գյուղական շրջանները:

7. **Աղդամի գավառում հաշվառված 2525 հայերից** 1917-ը բնակվում էր Թարթառ (Տերտեր) քաղաքում և համանուն շրջանի գյուղական վայրերում: Հայաշատ էին նաև Եվլախ, Աղդամ քաղաքներն ու Բարդայի գյուղական շրջանը (250 մարդ):

8. **Զաքաթալայի գավառի հայ ազգաբնակչության թվաքանակը կազմում էր 1399 մարդ:** Զաքաթալա քաղաքի հայությունը կազմում էր 1181 մարդ կամ քաղաքի բնակչության 35,7 տոկոսը: Գավառի հայության փոքր մասը ցրված էր գյուղական շրջաններում:

9. **Ղուբա գավառի 894 հայերից** 591-ը բնակվում էր Դիվիչի գյուղական շրջանում, իսկ մնացածը ցրված էր գավառի թե՛ քաղաքային, թե՛ գյուղական վայրերում:

10. **Ջեբրայիլի գավառի 625 հայերի** կեսից ավելին՝ 383 մարդ, բնակվում էր Կարյագինո(Սարդար) քաղաքում և նրա համանուն գյուղական շրջանում: Հայաբնակ էին նաև գավառի Հորադիզ, Ջեբրայիլ, Զանգելան և Խանլըխ գյուղական շրջանները:

11. **Քուրդիստան գավառի 373 հայերի** հիմնական մասը բնակվում էր Մուրադխանլիի և Ղուբաթլուի գյուղական շրջաններում: Լաչինի 435 բնակչից 66-ը հայ էր:

12. **Լենքորանի գավառում բնակվում էր 511 հայ**, որից 216-ը՝ Լենքորան քաղաքում: Հայերը գլխավորապես կենտրոնացած էին գավառի գյուղական շրջաններից Պրիշիբում(202 մարդ):

13. **Սալյանի գավառում բնակվում էր 335 հայ**, որն ամենափոքրն էր հայ բնակիչների թվաքանակով: Գավառի հայությունը ցրված էր թե՛ քաղաքային, թե՛ գյուղական բնակավայրերում[5]:

Դեռևս 1918-1920 թթ. ազգամիջյան ընդհարումների ժամանակ նախիջևանահայերի հոծ խմբեր ստիպված էին հեռանալ հայրենի օջախներից և ապաստանել Հայաստանի այլ տարածքներում, Իրանում և այլ երկրներում: Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը, շարունակելով հայահալած քաղաքականությունը, արգելեց գաղթած հայերի վերադարձն իրենց հայրենի օջախներ: Մյուս կողմից՝ նա ձգտում էր զանգվածաբար իրենց բնօրրանից հեռացնել նրանց, ովքեր մնացել էին տեղում կամ կարողացել էին վերադառնալ: Ադրբեջանի ՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Մուսաբեկովը 1922 թ. հունիսի 24-ին Հայաստանի ՍԽՀ Ժողկոմխորհի նախագահին հեռագրեց, թե Ադրբեջանի կենտգործկոմի որոշմամբ արգելվում է բնակչության զանգվածային մուտք Ադրբեջանի սահմաններ[6]:

Գաղթական դարձած նախիջևանահայերի բոլոր բողոքներն ու ջանքերն անօգուտ անցան. հայրենի օջախներ նրանց վերադարձը չթույլատրվեց: Դատարկված հայկական շատ գյուղերում ու բնակավայրերում բնակություն հաստատեցին թուրք-թաթարները: Ադրբեջանը չէր ընդունում «գաղթականների պրոբլեմը» իրականության հետ կապ չունեցող սակավահողության պատճառաբանությամբ: Օրինակ՝ ըստ

---

[5] Տե՛ս Всесоюзная перепись населения 1926-го года, т. XIV, էջ 60-77:

[6] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 123, ց. 42, գ.8, թ. 13:

վիճակագրական տվյալների՝ Ալիաբադ, Ապրակունիս, Հաջիվար, Կապուտ, Կարախանբեկլու, Թազաքենդ և Թմբուլ գյուղերում 1917թ. հունիսին կար 2340 ծուխ, 1925 թ. նույն գյուղերում բնակվող ծխերի թվաքանակը հասնում էր 690-ի[7]: Հայկական Ղազանչի գյուղում, որտեղ մինչև հեղափոխությունը բնակվում էր 400 մարդ, 1925թ. կար միայն 14 թուրք ընտանիք[8]:

Անդրերկրկոմի որոշմամբ 1923 թ. վերջին ստեղծվեց Նախիջևանի Ինքնավար երկրամասը, որը 1924 թ. փետրվարի 9-ին վերանվանվեց Նախիջևանի Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն (ՆԻԽՍՀ)՝ Ադրբեջանի ՍԽՀ կազմում:

1926 թ. մարդահամարի տվյալներով Նախիջևանում հայերի թվաքանակը 5 անգամ նվազել և իջել էր 11 276-ի, որը կազմում էր Նախիջևանի բնակչության ընդամենը 10,8 տոկոսը[9]: 1926 թ. դրությամբ Նախիջևանի ԻԽՍՀ-ն ուներ 3 քաղաք, բաժանված էր 8 գյուղական շրջանների: Նախիջևան քաղաքում բնակվում էր 1065 հայ, որը կազմում էր քաղաքի բնակչության10,3 տոկոսը, իսկ Օրդուբադում՝ 77 հայ: Ջուղա (Ջուլֆա) քաղաքի հայ ազգաբնակչությունը (293 մարդ) թվաքանակով գերազանցում էր տեղի թուրք ազգաբնակչությանը: Նախիջևանի ԻԽՍՀ Փարագա գյուղական շրջանում հայ ազգաբնակչության թվաքանակը հասնում էր 2789 մարդու և կազմում էր ամբողջ շրջանի բնակչության 60,8 տոկոսը: Հայ բնակչության թվաքանակի մեծությամբ երկրորդը Նարիմանովկայի շրջանն էր, որտեղ բնակվում էին 2004 հայեր, ապա Տումբուլի շրջանը՝ 1529 հայերով: Կիվրախի գյուղական շրջանում բնակվում էր 1079 հայ, Աբրակունիս շրջանում՝ 876 հայ, Ջուղայի շրջանում՝ 848 հայ, Բաշ Նորաշենի շրջանում՝ 455 հայ, Օրդուբադի շրջանում 261 հայ: Նախիջևանի ԻԽՍՀ գյուղական շրջանների հայության ընդհանուր թվաքանակը կազմում էր 9841 մարդ: Նախիջևանի ԻԽՍՀ հայ բնակչության 99,5 տոկոսի համար հայերենը մայրենի լեզու էր: Գրագետ էր նախիջևանահայության 33,3 տոկոսը, որի ճնշող մեծամասնությունը գրագետ էր նաև ազգային լեզվով:

1939 թ. համամիութենական մարդահամարի տվյալներով Նախիջևանի ԻԽՍՀ-ում բնակվում էր 13 350 հայեր (բնակչության 10,5 տոկոսը), որոնցից քաղաքաբնակ էր 3016 մարդ: Հետագա տարիներին Ադրբեջանի վարած ազգային խտրականության քաղաքականության հետևանքով Նախիջևանում հայկական բնակչության թիվը գնալով նվազեց, և հայկական այս երկրամասն ամբողջությամբ հայազրկվեց:

1923 թ.կազմավորված ԼՂԻՄ-ն ուներ 2 քաղաք և 5 գյուղական շրջան՝ 125 159 բնակիչներով, որոնց 89,2 տոկոսը (111 694 մարդ) հայեր էին, 10 տոկոսը կամ 12 592 մարդ թուրքեր: ԼՂԻՄ քաղաքներում բնակվում էին 2817 հայեր (Ստեփանակերտում՝ 2724 մարդ, իսկ Շուշիում՝ 93 մարդ): Ղարաբաղի և Հարավային Կովկասի խոշոր հայկական կենտրոն Շուշիում Ադրբեջանի մուսավաթական կառավարության իրականացրած ջարդերի և հայաթափության հետևանքով վերացվել էր քաղաքի գերակշիռ մասը կազմող հայ բնակչությունը: Շուշիի շրջանի գյուղերում ևս

---

[7] Տե՛ս Խոջաբեկյան Վ., Արցախը փորձության ժամին, Երևան, 1991, էջ 78:

[8] Տե՛ս նույն տեղում, էջ 76:

[9] Տե՛ս Всесоюзная перепись населения 17-го декабря 1926. Краткие сводки, вып. IV, Москва, 1928, էջ 127:

իրավիճակը նույնն էր. ամբողջ շրջանում բնակվում էր ընդամենը 8 հայ: Շուշի քաղաքն ու համանուն շրջանը դարձել էին գրեթե հայաթափ, ինչը Բաքվի իշխանությունների հակահայ քաղաքականության արտահայտությունն էր: Շուշի քաղաքը և համանուն շրջանը բնակեցված էր 9220 թուրքերով (կազմում էին ԼՂԻՄ թուրք բնակչության 73,2 տոկոսը), որոնք արհեստականորեն ձևավորված ադրբեջանական Քուրդիստանի հետ մեկտեղ նպատակ էին հետապնդում թուլացնելու Ղարաբաղի կապը հայկական ԽՍՀ-ի հետ: ԼՂԻՄ գյուղական շրջաններում բնակվում էին 108 877 հայ և ընդամենը 7349 թուրք, այդ թվում՝

1. **Վարանդայի շրջան՝ 28 190 հայ, 650 թուրք,**
2. **Ջրաբերդի շրջան՝ 29 292 հայ, 1914 թուրք,**
3. **Խաչենի շրջան՝ 26 702 հայ, 22 թուրք,**
4. **Դիզակի շրջան՝ 24 685 հայ, 443 թուրք,**
5. **Շուշիի շրջան՝ 8 հայ, 4320 թուրք:**

ԼՂԻՄ հայ ազգաբնակչության 99,9 տոկոսի համար մայրենի լեզու էր ազգային լեզուն՝ հայերենը: Գրագետ էր ԼՂԻՄ հայ բնակչության 23 տոկոսը, որը գրեթե ամբողջությամբ գրագետ էր նաև իր ազգային լեզվով:

1926 թ. մարդահամարը փաստել է նաև Ադրբեջանի ՍԽՀ-ում բնակվող, սակայն օտարահպատակ հայ ազգաբնակչության թվաքանակը, որը կազմում էր 2387 մարդ՝ գլխավորապես կենտրոնացած Բաքու քաղաքում (2107 մարդ)[10]:

1930-ական թթ. Ադրբեջանի ՍԽՀ հայ ազգաբնակչության թվաքանակը շարունակական աճ է դրսևորել, ինչն ակնհայտորեն երևում է 1930-ական թթ. ԽՍՀՄ-ում անցկացված մարդահամարների վիճակագրական տվյալներից: Այսպես, չնայած 1937 թ. մարդահամարի արդյունքները չեղյալ հայտարարելուն՝ այդուհանդերձ արձանագրվել է Ադրբեջանական ԽՍՀ հայ ազգաբնակչության ընդհանուր թվաքանակը (370 164 մարդ)՝ ինչը ցույց է տալիս հայության անցած ավելի քան 10 տարիների աճի դինամիկան (աճը կազմել է 88 160 մարդ):

Ավելի ճշգրտված ու վերջնական տվյալներ Ադրբեջանական ԽՍՀ հայ ազգաբնակչության վերաբերյալ արձանագրել է 1939 թ. համամիութենական մարդահամարը:

Ադրբեջանական ԽՍՀ-ում, ըստ 1939 թ. մարդահամարի տվյալների, հայերի թվաքանակը կազմում էր 388 025 մարդ, որից ԼՂԻՄ-ում՝ 132 800 հայ (մարզի բնակչության 88 տոկոսը): ԼՂԻՄ-ում քաղաքաբնակ էին 10 555 հայեր:

Արդեն 1939 թ. մարդահամարով Ադրբեջանական ԽՍՀ քաղաքաբնակ հայության տեսակարար կշիռն աճել և կազմում էր 44 տոկոս: Միայն Բաքու քաղաքում բնակվում էր ադրբեջանահայության 30,5 տոկոսը: Բաքվի հայ ազգաբնակչության թվաքանակի կտրուկ աճը հիմնականում պայմանավորված էր գյուղական շրջաններից հայության արտահոսքով: **1920-1930-ական թթ. Խորհրդային Ադրբեջանը ԽՍՀՄ-ում հայության բնակության խոշորագույն կենտրոններից մեկն էր:**

---

[10] Տե՛ս Всесоюзная перепись населения 1926-го года, т. XIV, էջ 79: